ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
1964-2023

ՁԻՆՎՈՐ, ԳՐԻՉ, ՔՐԻՍՏՈՆՅԱ...

Երբ եկավ և երբ գնաց:

Ապրած ժամանակն իրապես շատ քիչ եղավ ամբարելու նրա կյանքի կոչումը: Երբ ժամն էր ընտրության, հրացանը ձեռքին առաջիններից մեկը կանգնեց Արցախի մարտական դիրքերում: Իր քաջարի հրամանատար Գեներալի կողքին մարտնչեց առաջին օրից մինչև վերջինը:

Վարդանի խնդրանքին՝ ուղարկել իրեն հետախուզության, Գեներալն ասել էր. «Չեմ ուղարկի, վախում եմ, թե գելերը կգան ու քեզ կուտեն, կխելոքանան կգան ու մեզ կուտեն»:

Վիրավորվեց ծանր. իր արյունն էլ խառնեց Արցախի հողին, սակայն այնժամ Տերը գթաց իրեն:

Մեր երկիրը, ըստ Վարդանի, չորս սրբություն ունի՝ եկեղեցի, բանակ, գիր ու գրականություն:

Նա զենքը ձեռքին միայն Արցախը չէր պաշտպանում, այլև Մատենադարանը: Գիտակցությունը՝ ծառայել Սրբ. Էջմիածնին ու Մատենադարանին միաձուլված էր նրա հոգում: Աշխարհիկ մարդ լինելով՝

առավել մոտեցավ քրիստոնյայի իր կոչումին: Եկեղեցու ազնվաբարո ծառա և հայոց անցյալի փառքի զորավոր վկայությունների՝ ձեռագրերի անխոնջ դպիր, գլուխը դրած նրանց ծնկին, ովքեր

Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն...

Որտեղ երևում էր, լույս էր բերում, լավատեսական տրամադրություն տարածում, երբեք չէր վիատվում, մաքառում էր անընդհատ:

Վանականներն ընդունում էին նրան որպես յուրայինի, լիներ դա Սուրբ Էջմիածնում, թե Անթիլիասում կամ Սուրբ Ղազար կղզում:

Գոց գիտեր հարյուրավոր հնագույն ձեռագրեր, սուրբ գրքեր, մատյաններ: Եվ կյանքն էլ էր նրա անցնում հայ գրքի խաչմերուկում, որպես ազգային գանձերի անընկճելի պահապան:

...Թեև դու աչքերդ փակեցիր հայրենիքից հեռու, բայց մենք բոլորս տեսնում ենք քեզ անխոնջ կքված հայրենի մագաղաթների առջև:

Եվ ուր էլ որ Տերը կամենա հոգիդ տանել, այնտեղ էլ մի պատի տակ լռիկ աղոթք ես մրմնջալու ազգիդ բարօրության համար:

Ավետիք Իսահակյան